

Ֆալիբիլիզմի և ինֆալիբիլիզմի հայեցակարգային վեճի էությունը և իմացաբանական նշանակությունը

Դավիթ Աբելյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-249>

Հանգուցային բառեր. *ճշմարտության հիմնախնդիր, գիտելիքի և հիմնավորման հիմնախնդիր, օբյեկտիվության հիմնախնդիր, ճանաչողության նպատակի հիմնախնդիր, ճշմարտություն, իմացաբանական հիմքեր, համոզմունք*

Նախաբան

Հարյուրամյակներ շարունակ փիլիսոփայական իմացաբանության գրեթե բոլոր ներկայացուցիչները համարել են, որ մարդկային իմացությունը պետք է հիմնվի անհերքելի, անսխալական և բացարձակ հիմքերի վրա: Իմացաբանական այսպիսի հիմքերի կատարելատիպը եղել է բազմաթիվ փիլիսոփաների և իմացաբանների երազանքը՝ գտնել այնպիսի հաստատուն իմացաբանական հանգրվաններ, որոնք իմացաբանական-գիտաբանական հիմք կլինեն անսխալական գիտելիքների ձևավորման, ճանաչողության և գիտելիքների առավել հիմնարար հայեցակարգերի ստեղծման և, որպես վերջնանպատակ, ճանաչողության ու ճշմարիտ իմացության համար: Անսխալական և բացարձակ իմացաբանական հիմքերի որոնման ավելի քան երկուհազարամյա պատմությունը լի է բազմաթիվ իմացաբանական վեճերով և հիմնախնդիրներով, որոնց հաղթահարման համար բազմիցս առաջարկվել են հաճախ հակադիր հայեցակարգային լուծումներ: Ներկայացված հիմնախնդրի տեսանկյունից խիստ արժեքավոր է ֆալիբիլիզմի և ինֆալիբիլիզմի իմացաբանական վեճը, որտեղ հակադիր հայեցակարգերից յուրաքանչյուրի օգտին վեճի լուծումը կարող է հանգեցնել այնպիսի հիմնախնդիրների վերափոխման անհրաժեշտությանը, ինչպիսիք են գիտելիքի բնույթի և հիմնավորման, գիտական գիտելիքի օբյեկտիվության, ճանաչողության հնարավորության, ճշմարտության բնույթի և ճշմարտության չափանիշների, ճշմարտության՝ որպես ճանաչողության և գիտական հետազոտության նպատակի, գիտական առաջընթացի և գիտելիքի աճի հիմնախնդիրները՝ հիմնարար և ուղենիշային նշանակություն ունենալով փիլիսոփայական իմացաբանության և գիտության փիլիսոփայության հետագա զարգացման համար: Թեև հակադիր հայեցակարգերի իմացաբանական վեճի ուսումնասիրության տարբեր փորձեր են ձեռնարկվել հատկապես 19-րդ դարից ի վեր, իսկ հայեցակարգերից յուրաքանչյուրը առանձին վերցրած եղել է բազմաթիվ ուսումնասիրությունների առարկա փիլիսոփայության ողջ պատմության ընթացքում, այնուամենայնիվ, այսօր դեռևս չկա միասնական ըմբռնում ֆալիբիլիզմի և ինֆալիբիլիզմի իմացաբանական վեճի էության, վերջինիս խնդրի առարկայի, օբյեկտի, հարցադրումների ու հիմնախնդիրների հիմնական շրջանակի, ինչպես նաև հայեցակարգային վեճի իմացաբանական նշանակության վերաբերյալ: Իմացաբանական վեճի էության ուսումնասիրումը և վերլուծումը, դրա իմացաբանական նշանակության հստակեցումը, ինչպես նաև վեճի համատեքստում և դրանից բխող իմացաբանական-գիտաբանական հիմնախնդիրների շրջանակի առանձնացումը համարվում են այս աշխատանքի կենտրոնական հիմնահարցերը: Այս նպատակով աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրներն ու հարցադրումները՝

1. Ո՞րն է ֆալիբիլիզմի և ինֆալիբիլիզմի վեճի էությունը և իմացաբանական նշանակությունը:
2. Ինչպիսի՞ հիմնախնդիրների շրջանակ է ենթադրում իմացաբանական վեճը:

3. Ինչպիսի՞ նշանակություն ունի ֆալիքիլիզմի և ինֆալիքիլիզմի իմացաբանական վեճը փիլիսոփայական իմացաբանության և գիտության փիլիսոփայության հիմնախնդիրների հասկացման, վերահիմնաստավորման ու լուծման տեսանկյունից:

Ֆալիքիլիզմի և ինֆալիքիլիզմի հայեցակարգային վեճի օբյեկտի խնդիրը

Ֆալիքիլիզմի և ինֆալիքիլիզմի վեճի հակադիր հայեցակարգերից յուրաքանչյուրի սահմանման և միջհայեցակարգային վեճի խնդրո առարկայի ձևակերպման փորձերը բազմաթիվ են մասնագիտական գրականության մեջ, որոնց առատությունը վկայում է խնդրի էության ընկալման ու հասկացման բարդությունը: Թիմ Բրաֆթն առանձնացնում է ֆալիքիլիզմի և ինֆալիքիլիզմի սահմանման և հայեցակարգային վեճի հասկացման դժվարությունները պայմանավորող մի քանի խնդիրներ, որոնցից ամենակարևորը **ֆալիքիլիզմի և ինֆալիքիլիզմի վեճի օբյեկտի խնդիրն է. ինչի՞ մասին է վեճը՝ համոզմունքների՝, հիմնավորման՝, թե՛ գիտելիքների** [8, 52]: Ալենհայտ է, որ ճանաչողության գործընթացն ապահովում է ինչպես որոշակի համոզմունքների, այնպես էլ որոշակի գիտելիքների ձևավորումը, սակայն համոզմունքների և գիտելիքների իմացաբանական արժեքը չի կարող լինել նույնը առաջին հերթին հիմնավորվածության տարբեր մակարդակների ու պահանջների պատճառով: Նաև պարզ է, որ **«ոչ բոլոր համոզմունքներն են անսխալական, և դա պարտադիր պայման չէ ունենալու համար համոզմունք, որը կլինի անսխալական»** [8, 53]: Այս ասելով՝ առավելապես նկատի է առնվում առօրյա գործունեության ընթացքում տարբերությո համոզմունքների ձեռքբերման փորձառությունը, որը հաճախ կարող է ուղեկցվել բազմաթիվ սխալ և չհիմնավորված համոզմունքների ձևավորմամբ, ինչպես, օրինակ, ջրով լի բաժակի մեջ դրված գդալի զգայական պատկերը վերարտադրվելիս կարող է ձևավորել **«կտորված գդալի»** համոզմունք, բաց երկնքում Արեգակի տեղաշարժի փոփոխությանը հետևելը՝ **Երկրի նկատմամբ Արեգակի պտույտի համոզմունք**, իսկ գնացքի ժամանակին ժամանակը՝ համոզմունք այն մասին, որ **գնացքը հաջորդ անգամ կրկին կժամանի ժամանակին**: Համոզմունքները որպես ճանաչողության առավել անմիջական և առաջնային արդյունք հաճախ տարբեր կերպ են մեկնաբանվում գիտելիքների հիմնավորման և բնույթի հարցերի առնչությամբ: Մի մոտեցմամբ լավ հիմնավորված և ճշմարիտ համոզմունքները գիտելիքներ են, իսկ մյուս մոտեցմամբ համոզմունքները երբեք չեն կարող համարվել գիտելիք կամ վերափոխվել գիտելիքի, քանի որ **գիտելիքները որոշակիության և անսխալականության առավել խիստ չափանիշներ ու պայմաններ են պահանջում**, որոնք էլ իրենց հերթին գործնականում լիարժեքորեն ապահովել ենարավոր չէ: Միննույն ժամանակ ինֆալիքիլիզմի շրջանակում **անսխալականության ջատագովները խնդիր չեն էլ դնում պնդելու բոլոր համոզմունքների անսխալականությունը**: Մա հաստատալու համար կարելի է հետ հայացք գցել իմացաբանության և գիտաբանության պատմությանը, որտեղ ավանդաբար գերիշխող են եղել սկեպտիցիզմի և ինֆալիքիլիզմի ընդհանուր մոտեցումները: Այս առնչությամբ տեղին է հիշել հայ փիլիսոփա Դավիթ Անհաղթին, ով **«առաջ քաշելով փիլիսոփայության, որպես գիտության, սահմանման և այդ կապակցությամբ աշխարհի ճանաչելիության պրոբլեմը՝ քննադատել և հերքել է հույն փիլիսոփա Պիտոնի և նրա հետևորդների ազնոստիցիզմը և սկեպտիցիզմը»** [1, 8-9]: Անհաղթն արդարացիորեն փորձում էր իմացաբանական հաստատուն և վերջնական հիմքերի ձևավորման ճանապարհին չեզոքացնել սկեպտիցիզմը և կասկածի ենարավորությունը ձևավորվելիք ճշմարիտ իմացությունում, սակայն, ինչպես հետագայում համոզվեցին փիլիսոփայական իմացաբանության մտածողները, կասկածի դուրս մղումը իմացության գործընթացից չափազանց բարդ խնդիր է կամ գուցե և անհնար: **Ըստ սկեպտիցիզմի՝ գիտելիքը պահանջում է որոշակիություն** (անտարակուսելիության և անկասկածելի լինելու իմաստով), սակայն մենք չենք կարող վստահ լինել (չունենալ ռացիոնալ կասկած) որևէ համոզմունքի և, այդ թվում, գիտելիքի հարցում: Հետևաբար՝ գիտելիքը և դրա ձեռքբերումն

անհնար են: Ինֆալիբիլիզմի ներկայացուցիչները համաձայն են գիտելիքի որոշակիության պահանջի հետ, սակայն միևնույն ժամանակ պնդում են, որ **հնարավոր է վստահ լինել (չունենալ ռացիոնալ կասկածներ) ոչ թե բոլոր, այլ որոշակի կոնկրետ համոզմունքների հարցում**: Հետևաբար որոշակի հիմնավոր համոզմունքներ և, հետևաբար, գիտելիքներ, այնուամենայնիվ, հնարավոր են [12, 369]: Իսկ ահա **ֆալիբիլիստները մերժում են գիտելիքի որոշակիության պահանջի վերաբերյալ դրույթը՝ պնդելով, որ հնարավոր չէ ունենալ որևէ համոզմունք առանց ռացիոնալ կասկածի**: Սակայն, այնուամենայնիվ, ռացիոնալ կասկածի և սխալների հետ համատեղելի գիտելիք ունենալ հնարավոր է: Արձանագրելով սա՝ կարելի է պնդել, որ **որոշ համոզմունքների սխալական բնույթը բավարարում է կամ, առնվազն, չի հակասում ինչպես ֆալիբիլիզմին, այնպես ինֆալիբիլիզմին**: Հենց այս առնչությամբ Քրաֆթը նշում է, որ **«ֆալիբիլիզմը և ինֆալիբիլիզմը հետաքրքիր են միայն այն դեպքում, երբ կիրառվում են հիմնավորման (առավելապես գիտելիքի հիմնավորման) կամ հենց գիտելիքի նկատմամբ»** [8, 53]: Իրապես, եթե համոզմունքների բնույթի առնչությամբ ֆալիբիլիզմը և ինֆալիբիլիզմը ունեն սկզբունքորեն համատեղելի (չբացառող) մոտեցումներ, ապա պատկերը տրամազգծորեն փոխվում է համոզմունքների ու գիտելիքների հիմնավորման և գիտելիքի բնույթի վերաբերյալ հայեցակարգերի մոտեցումներում: Քրաֆթից բացի մի շարք մտածողներ ևս արձանագրել են հայեցակարգային վեճի նման բնույթը: Մասնավորապես, ըստ Ադամ Լեյտեի, **«ֆալիբիլիզմը (հետևաբար, նաև ինֆալիբիլիզմը) թեզ է նախնառաջ գիտելիքի և հիմնավորման մասին. մենք կարող ենք սխալական հիմնավորումներ ունենալ մեր համոզմունքների համար և կարող ենք իմանալ ինչ-որ բան, նույնիսկ եթե մենք ունենք միայն սխալական հիմնավորում դրան հավատալու համար»** [9, 370]: Բարոն Ռիդը կարևորում է այն **իմացաբանական հիմքերը և պայմանները, որոնք կարող են ապահովել ճշմարիտ համոզմունքների և, ի վերջո, գիտելիքի ձեռքբերումը** [11, 585]: Պետք է արձանագրել, որ հայեցակարգային վեճի նման ըմբռնումն ու գնահատումը տրամաբանական է, քանի որ ճանաչողության ողջ գործընթացի և առավել բարդ իմացաբանական համակարգերի կառուցարկումն ու ձևավորումը, ինչպիսին են, օրինակ, պատական վարկածները, տեսությունները, հայեցակարգերը, սկզբունքները և, վերջիվերջո, աշխարհի գիտական պատկերը, անմիջականորեն պայմանավորված են ոչ թե համոզմունքների ընդհանրապես, այլ հենց գիտելիքի և, մասնավորապես, գիտական գիտելիքի առանձնահատկությունների, դրանց հիմնավորման և այլ հարցերի հնարավոր հանգուցալուծումներից: **Ուստի ֆալիբիլիզմի և ինֆալիբիլիզմի վեճը իմացաբանական-գիտաբանական առումով առավել արժեքավոր և հետաքրքիր է նախնառաջ գիտելիքի հիմնավորման և գիտելիքի բնույթի հարցերի առնչությամբ**:

Ֆալիբիլիզմի և ինֆալիբիլիզմի հայեցակարգային վեճի հիմնախնդիրների շրջանակը Արձանագրելով հայեցակարգային վեճի նման բնույթը՝ այժմ հնարավոր է ուրվագծել այն հիմնախնդիրների շրջանակը, որոնք էական են վեճի հասկացման ու լուծման համար և որոնք իրենց հերթին կարող են մեծ ազդեցություն կրել հայեցակարգային վեճի հանգուցալուծման այս կամ այն հնարավոր սցենարի դեպքում: Այս առումով առավել հետաքրքրական են **«Ճշմարտության բնույթի և ճշմարտության չափանիշների հիմնախնդիրը», «գիտելիքի բնույթի, չափանիշների և հիմնավորման հիմնախնդիրը», «ճշմարտության որպես ճանաչողության և, մասնավորապես, գիտական ճանաչողության նպատակի հիմնախնդիրը»** և **«գիտական գիտելիքի օբյեկտիվության հիմնախնդիրը»**: Ստեֆան Հեթերինգթոնն իր հոդվածում, ընդհանրացնելով ֆալիբիլիզմի վերաբերյալ հիմնական սահմանումներն ու մոտեցումները, գիտելիքիների և վերջինիս հիմնավորման վերաբերյալ առաջարկում է ֆալիբիլիզմի հետևյալ ձևակերպումները

1. **Բոլոր համոզմունքները (գիտելիքները) սխալական են:**

2. **Բոլոր համոզմունքները (գիտելիքները) լավագույն դեպքում հիմնավորված են սխալականորեն [14]:**

Ֆալիբիլիզմի այսպիսի ձևակերպումներից բխում է, որ **չկա որևէ համոզմունք կամ գիտելիք, որը սկզբունքորեն անսխալական է և կարող է հիմնավորվել անսխալական որևէ հիմք(եր)ի միջոցով:** Լայն իմաստով, ֆալիբիլիզմը բացառում է գիտելիքի այնպիսի նմուշ, որը սկզբունքորեն կարող է գերծ լինել սխալ պարունակելու հնարավորությունից: Մխալական գիտելիքի ըմբռնումը կարծես թե համատեղելի է զանգվածաբար սխալներ գործելուն հակված մարդկային բնույթի հետ և կարող է հիմք հանդիսանալ վերջինիս հասկացման ու «արդարացման» համար: Հետևաբար, եթե սխալականությունն ատրիբուտիվ է գիտելիքի համար, ապա **ինչպե՞ս է հնարավոր համատեղել սխալականությունը և սխալական գիտելիքը ճշմարտության ու ճշմարիտ գիտելիքի գաղափարների հետ:** Բնարկե, հայեցակարգային վեճի համատեքստում հայեցակարգերից յուրաքանչյուրն ընդհանրական սահմանումներից զատ մասնագիտական գրականությունում այսօր կան նաև ֆալիբիլիզմի և ինֆալիբիլիզմի մի շարք մասնավոր ըմբռնումներ՝ տարատեսակներ, որոնք արտահայտում են հայեցակարգերի առավել «մեղմ» կամ «խիստ» աստիճանները՝ ըստ կիրառման տիրույթի: Որոշ ինֆալիբիլիստներ կարող են պնդել, որ **անսխալականությունը անհրաժեշտ պայման է գիտելիքի և ճշմարիտ իմացության համար, սակայն նման պայմանի ապահովումը գործնականում հնարավոր չէ:** Միևնույն ժամանակ կան ֆալիբիլիստներ, ովքեր կարող են թույլ տալ որոշակի սահմանափակ թվով անսխալական գիտելիքների գոյության հնարավորությունը, ինչպիսին կարող են լինել մաթեմատիկական և տրամաբանական դրույթները: Այնուամենայնիվ, նույնիսկ հայեցակարգային վեճի փոխզիջումային մոտեցումների պարագայում վերը արձանագրված հիմնախնդիրներն այս համատեքստում չեն ստանում իրենց որոշակի և առավել հստակ պատասխանները, իսկ իմացաբանական վեճը շարունակում է ծավալվել՝ առկա հարցադրումների թվին ավելացնելով նորերը:

Ֆալիբիլիզմի ժամանակակից ըմբռնման և հայեցակարգային ձևակերպման հեղինակներից Չարլզ Պիրսը կարծում էր, որ **«Մշտական կասկածի առկայությունը համոզմունքի ձեռքբերման համար մղվող պայքարի միակ անմիջական շարժառիթն է»:** Ճշմարիտ իմացության ձեռքբերման ճանապարհին կասկածն ունի առաջնորդող դեր նաև Դեկարտի իմացաբանական համակարգում, որտեղ միայն կասկածի միջոցով էր հնարավոր հասնել բացարձակ և ճշմարիտ իմացաբանական հիմքերի: Սակայն **մարդը, մշտապես ձգտելով անկասկածելի ու ճշմարիտ համոզմունքների և հասնելով որոշակի համոզմունքների ձևավորմանը, այլևս չի ունենում կասկած իր իսկ համոզմունքների նկատմամբ և դրանք ճշմարիտ է համարում՝ անկախ այն բանից՝ դրանք ճշմարիտ են, թե ոչ [10, 10]:** Ընդհանրապես, ճշմարտության գաղափարի ընկալման և ճշմարիտ իմացության ձևավորման համար նախնառաջ ճշմարտության առնչությամբ անհրաժեշտ է ապահովել երկու նախապայմանների առկայությունը՝ **ճշմարտության սահմանումը և չափանիշ(ներ)ը:** Ֆալիբիլիզմի համատեքստում խոսելով ճշմարտության սահմանման, ճշմարտության չափանիշների հիմնախնդիրների մասին՝ Կոնստանտին Կուլենդյան գրում է, որ **«Ֆալիբիլիզմը կարող է վերաբերել տրված ճշմարտությունների գնահատման հարցում որոշակի չափանիշների կիրառման խնդրին, բայց դա ոչ մի կերպ չի ազդում ճշմարտության սահմանման վրա: Մենք հակված ենք սխալվելու, քանի որ որոշ իրավիճակներում մեր կիրառած չափանիշները անբավարար են ու անհամապատասխան, և ճշմարտության ճիշտ սահմանումը թույլ է տալիս մեզ բացահայտել, որ մեր չափանիշները տեղին չեն նման իրավիճակներում»:** Փիլիսոփայական իմացաբանության և գիտության գրեթե ողջ պատմության ընթացքում կար

համոզմունք, որ ոչ միայն իմացությունն է հնարավոր կառուցել բացարձակ և անսխալական իմացաբանական հիմքերի վրա, այլ նաև հնարավոր են ճշմարտության անփոփոխ ու անսխալական չափանիշներ և գիտական մեթոդներ: **Եթե կան ճշմարտության գնահատման անփոփոխ չափանիշներ և բացարձակ գիտական մեթոդ, ապա պետք է հնարավոր լինի ստույգ կերպով ասել, որ ներկայումս մեր ունեցած իմացությունն ավելի հավաստի է, իսկ գիտական տեսությունները ավելի ճշգրիտ են ու ավելի լավ են մեկնաբանում իրականությունը, քան դա հնարավոր էր իրականացնել մեր նախորդ իմացության և տեսությունների միջոցով** [16]: Արդյո՞ք մենք կարող ենք անսխալականորեն և վճռակա-նորեն այսպիսի բան պնդել: Դեռևս Արիստոտելից սկսած մի շարք մտածողներ փորձել են ձևակերպել ճշմարտության տարբեր չափանիշներ և գիտության մեթոդներ, որոնք թույլ կտան ճանաչել իրականությունն այնպես, ինչպիսին այն կա և կապահովեն սխալներից զերծ ու բացարձակ ճշմարիտ ճանաչողությանը հասնելու հնարավորությունը: Փիլիսոփա-յական իմացաբանությանը և գիտության պատմությանը հայտնի են ճշմարտության մի շարք սկզբունքներ և գիտական մեթոդներ, որոնցից հատկանշական է հիշել Արիստոտելի կողմից ձևակերպված **ճշմարտության համապատասխանության (կորեսպոնդենցիայի) ու ճշմարտության անհեղափոխականության (կոնհերենտության) սկզբունքները**, արդեն հետագայում առաջարկված **պարզության և կոնվենցիոնալիստական սկզբունքները** և **ինդուկտիվ-էմպիրիկական մեթոդը, պրագմատիկական մեթոդը, հիպոթետիկ-դեդուկտիվ մեթոդը**: Իմացաբանական բացարձակ հիմքերի և ճշմարտության համընդհանուր չափանիշ-ների որոնման դարավոր փորձերի արդյունքում ակնհայտ դարձան այն խնդիրները, որոնք խոչընդոտում են անսխալական և բացարձակ իմացության, չափանիշների և մեթոդների ձևավորմանը, որոնց արդյունքում մասնագիտական հանրության մի շարք ներկայացու-ցիչներ հայեցակարգային վեճի առնչությամբ վերանայեցին իրենց հայացքները հօգուտ ֆալսիֆիկմի: Այս առումով հատկանշական են **գգայությունների, ինդուկցիայի և դիտարկ-ման տեսական ազդեցությունը (սարքային հարաբերականության) խնդիրները**, որոնք ֆալսիֆիկմի օգտին առկա հիմնական և գորեղ փաստարկների շարքում են [15]: Զգայական ճանաչողության խնդիրները և այս եղանակով ձևավորված համոզմունքների և գիտելիք-ների սխալական բնույթը հստակ ազդակ է այն մասին, որ **ընկալված իրականության ու, ի վերջո, մտքի և իրականության միջև համապատասխանությունը միշտ չէ, որ կարող է տեղի ունենալ անսխալականորեն**: Ինդուկտիվ եզրակացության և փորձի սահմանափակ ու սխա-լական լինելու հնարավորությունը, ինչպես նաև փորձերի և դիտարկումների նախկինում ընդունված տեսությունների կողմից ազդված ու սահմանափակված լինելու խնդիրները ի ցույց դրեցին նշված մյուս մեթոդների և սկզբունքների ներքին հակասական և խնդրա-հարույց կետերը: Այս առնչությամբ հետաքրքրական է նաև Կոպեռնիկոսյան տիեզերագի-տական տեսության շուրջ ծագած մեթոդաբանական խնդրի պատմությունը:

16-րդ դարում **Կոպեռնիկոսը մշակեց իր տիեզերագիտական տեսությունը**, որի շրջա-նակում նկարագրվում էր տիեզերական մարմինների և, մասնավորապես, Արեգակնային համակարգի տարբեր օրինաչափություններ և երկնային մարմինների շարժման օրենքներ: Այս տեսությունը մի շարք առումներով համապատասխանում էր ժամանակակից գիտու-թյունում լայն կիրառվող հիպոթետիկ դեդուկտիվ-մեթոդի չափանիշներին, քանի որ իր տեսության շրջանակում Կոպեռնիկոսն առաջարկում էր նոր վարկածներ Արեգակնային համակարգի վերաբերյալ, կանխատեսումներ էր իրականացնում դեռևս չդիտարկված երևույթների վերաբերյալ և ձգտում էր իր կանխատեսումները փորձնականորեն հաստա-տել: Մակայն պատմական այն շրջանում, երբ Կոպեռնիկոսը ներկայացնում էր իր տեսու-թյունը, դեռևս տիրապետող էին **Պտղոմեոսի տիեզերագիտական տեսությունը** (2-րդ դար) և **Արիստոտելի կողմից առաջարկված մեթոդաբանական սկզբունքները** (մ. թ. ա. 4-րդ դար),

որոնք հարյուրամյակներ շարունակ համարվում էին փիլիսոփայական իմացաբանության և գիտության հիմնական մեթոդաբանական ուղենիշերը: Կոպեռնիկոսյան տիեզերագիտական տեսությունից բխում էր, որ Արեգակնային համակարգի մոլորակներից Վեներայի ֆազային ամբողջական անցումները պետք է դիտարկելի լինեն Երկրից: Մինևույն ժամանակ Պտղոմեոսյան տիեզերագիտական տեսությունից բխում էր, որ Երկրից հնարավոր չէ ամբողջությամբ դիտարկել Վեներայի ֆազային անցումները: Սակայն Գալիլեո Գալիլեյի փորձերի և երկար դիտարկումների արդյունքում հնարավոր եղավ արձանագրել Վեներայի ամբողջական ֆազային անցումները, որն էլ հաստատեց կոպեռնիկոսյան տեսության կանխատեսումները: Սակայն նույնիսկ այս պարագայում 16-րդ դարի գիտական հանրությունը միանգամից չընդունեց կոպեռնիկոսյան տիեզերագիտական տեսությունը, քանի որ այդ ժամանակի գիտական հանրությունը շարունակում էր առաջնորդվել գիտության արիստոտելյան մեթոդաբանական սկզբունքներով: **Արիստոտելյան մեթոդաբանական սկզբունքների շրջանակում ճշմարտությունն ուներ խիստ ինտուիտիվ և անմիջական փորձառության միջոցով հասանելի բնույթ**: *Գյուրաքանչյուր բնական իրողության էությունը ինտուիտիվ կերպով կարող է բխեցվել փորձառու մարդու կողմից* [5, 144]: Բսկ սա նշանակում էր, որ դատողությունն ընդունելի է, եթե այն բխեցվում է ինտուիտիվ կերպով ճշմարիտ համարվող այլ դատողություններից: Ահա հենց այս պատճառով **16-րդ դարի մասնագիտական համայնքը փորձում էր կոպեռնիկոսյան տեսությունում առաջին հերթին գտնել ինտուիտիվ ճշմարտություններ**: Բսկ ինտուիտիվ ճշմարտությունները ենթադրում էին անմիջական կենսափորձում տրված իրողությունների արձանագրում, որին իր հերթին չէր բավարարում կոպեռնիկոսյան տեսությունը: Պտղոմեոսյան տեսությունը ենթադրում էր երկրակենտրոն համակարգ, որն ընդունելի էր տվյալ ժամանակի գիտական հանրության համար և ինտուիտիվ կերպով բխում էր անմիջական դիտարկումներից ու կենսափորձից: Բսկ կոպեռնիկոսյան տեսությունը ենթադրում է արեգակակենտրոն համակարգ, որտեղ մոլորակը գտնվում էր շարժման և արեգակնային ուղեծրով պտույտի մեջ՝ չհամապատասխանելով անմիջական դիտարկումներին և ինտուիտիվ ճշմարտության չափանիշին [2, 118-119]: Գիտության պատմության այս և այլ դրվագների քննության արդյունքում պարզ է դառնում, որ **ճշմարտության ու գիտելիքի չափանիշների և գիտելիքի հիմնավորման հիմնախնդիրները** անմիջականորեն կապված են ֆալսիֆիկամի և ինֆալսիֆիկամի հայեցակարգային վեճի և դրա հնարավոր հանգուցալուծման հետ: Տրված ճշմարտությունների գնահատման հարցում անհրաժեշտ են որոշակի իմացաբանական սկզբունքներ և մեթոդներ, որոնք թույլ կտան այս կամ այն դրույթը կամ գիտելիքը առավել ճշմարիտ, հիմնավոր և նախընտրելի համարել մեկ այլ դրույթի կամ գիտելիքի նկատմամբ: Սակայն զգայական ճանաչողության, փորձի և դիտարկումների համար կիրառվող սարքերի առնչությամբ արձանագրված իմացաբանական խնդիրները, ինչպես նաև փիլիսոփայական իմացաբանության ու գիտության պատմության ընթացքում մրցակցող տեսությունների գնահատման խնդիրները ոչ միայն ցույց են տալիս այն, որ **մենք երբեմն կարող ենք ձևավորել սխալ համոզմունքներ և գիտելիքներ**, այլ նաև այն, որ **հնարավոր չէ երբևէ երաշխիք ունենալ ձևավորվելիք համոզմունքի և գիտելիքի ճշմարիտ լինելու մեջ անսխալականորեն, ինչից էլ հետևում է, որ գոյություն չունեն ճշմարտության և գիտելիքների գնահատման անփոփոխ, անսխալական ու վերջնական սկզբունքներ և մեթոդներ**: Քննարկվող խնդրի առնչությամբ տեղին է հիշել 20-րդ դարի փիլիսոփայության ներկայացուցիչ Կառլ Փոփերին. **«Եթե կա մեկը, ով կարծում է, որ գիտական մեթոդը գիտությունում միշտ հանգեցնում է հաջողության, ապա շարաչար սխալվում է: Գոյություն չունի հաջողությունն ապահովող վերջնական և երաշխավորող ուղի»** [4, 255-256]: Մինևույն ժամանակ պետք է արձանագրել, որ տվյալ ժամանակաշրջանում դեռևս տիրապետող իմացաբանական սկզբունքները և գիտության մեթոդները կարող են իրենց

հերթին ազդել **գիտելիքի աճի և գիտական առաջընթացի** վրա, ինչպես դա ակնհայտ էր Կոպեռնիկոսի տեսության շուրջ ծագած խնդրի պատմական դրվագից: Վերը քննարկվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ եթե ճշմարտության իմացաբանական սկզբունքները և գիտական մեթոդները նույնպես սխալական են և ունեն հարափոփոխ բնույթ, ինչպես համոզմունքները և գիտելիքները, դա նշանակում է, որ **ճշմարտության իմացաբանական սկզբունքների և գիտական մեթոդների վերանայման արդյունքում վերանայման անհրաժեշտություն առաջ են կանգնելու նաև այն բոլոր համոզմունքները, գիտելիքները, հիմնավորումները, գիտական վարկածները, տեսությունները և գիտելիքների այլ համակարգերը, որոնք ճշմարիտ, հիմնավորված կամ ընդունված են համարվել որոշակի իմացաբանական սկզբունքների և գիտական մեթոդների կիրառման արդյունքում:**

Եթե դժվար չէ չհամաձայնել Կոլենդայի հետ այն դիտարկման անչտյությամբ, ըստ որի՝ ֆալսիֆիկիզմը նաև վերաբերում է ճշմարտությունների գնահատման հարցում որոշակի չափանիշների կիրառման խնդրին, ապա նույնը հնարավոր չէ պնդել ճշմարտության սահմանման վերաբերյալ մտածողի դիտարկումների վերաբերյալ: **Ֆալսիֆիզմի և ինֆալսիֆիզմի իմացաբանական վեճը անմիջականորեն կապված է ճշմարտության սահմանման հիմնախնդրի և դրա հնարավոր լուծման հետ:** Իմացաբանական հայեցակարգային վեճի հնարավոր զարգացումները կարող են և որոշում են ճշմարտության սահմանման և բնույթի հիմնախնդիրները: Ճշմարտության ինֆալսիֆիստական առավել ընդհանուր ըմբռնման համաձայն՝ **«Ճշմարիտ է այն «Ա» դատողությունը (համոզմունքը, գիտելիքը), որը սկզբունքորեն անսխալական է, այսինքն, բացառում է միաժամանակ «Ոչ Ա» դատողությունը»:** Ճշմարտության ֆալսիֆիստական առավել ընդհանուր ըմբռնման դեպքում **հնարավոր է այնպիսի «Ա» ճշմարիտ դատողություն, որը համատեղելի է տվյալ դատողությանը անմիջականորեն հակասող «Ոչ Ա» դատողության հետ:** Պատմականորեն ճշմարտության դասական ըմբռնումները ձևակերպվում էին այնպես, որ դրանց հիմքում ընդունվում էր որոշակի կանխադրված ճշմարտությունների գոյությունը: Ճշմարտության համապատասխանության սկզբունքը ենթադրում էր, որ կա ինքնին օբյեկտիվ իրականություն, և այն հնարավոր է համապատասխանեցնել սուբյեկտի մտքում տվյալ իրականության ընկալված պատկերին: Ժամանակակից իմացաբանական տեսություններն այսօր մեծամասամբ կառուցվում են՝ առանց կասկածի տակ դնելու անկախ և օբյեկտիվ իրականության գոյության հնարավորությունը: Եվ ֆալսիֆիզմի և ինֆալսիֆիզմի համար անկյունաքարային է **ռեալիզմը** և հատկապես **գիտական ռեալիզմը**, որոնց վրա հենվում են ոչ միայն քննարկվող հայեցակարգերը, այլ նաև ժամանակակից իմացաբանության, գիտության փիլիսոփայության և առհասարակ գիտության գրեթե բոլոր տեսությունները: Սակայն նույնիսկ այս դեպքում դեռևս խնդրահարույց են մնում մտքի և իրականության համապատասխանության և արդեն իսկ հայտնի ճշմարտությունների վրա հիմնված իմացության հարցերը, որոնց սխալական բնույթը և անսխալական իմացաբանական հիմքերի ու երաշխիքների բացակայությունը հիմնավոր կասկածի տակ է առնում ճշմարտության դասական սահմանումները՝ առաջ բերելով ճշմարտության սահմանման արմատական վերանայման խնդիրը: Ֆալսիֆիզմի և ինֆալսիֆիզմի իմացաբանական վեճի համատեքստում ճշմարտության ըմբռնումն ընդհանուր առմամբ կարող է արտահայտվել հակասող երկու մոտեցումների՝ ճշմարտության ֆալսիֆիստական ու ինֆալսիֆիստական բանաձևերի միջոցով: Ճշմարտության ֆալսիֆիստական ըմբռնմամբ **ճշմարտությունը համատեղելի է սխալների հետ, և հնարավոր է իմանալ Ա-ն, ունենալ Ա-ի մասին ճշմարիտ գիտելիք՝ չբացառելով, որ Ա-ն կարող է լինել սխալ:** Ճշմարտության ինֆալսիֆիստական ըմբռնման դեպքում **ճշմարտությունն անհամատեղելի է սխալների հետ, և հնարավոր է իմանալ Ա-ն, ունենալ Ա-ի մասին ճշմարիտ գիտելիք միայն և միայն այն դեպքում, երբ բացառված է, որ Ա-ն կարող է լինել սխալ:** Ճշմարտու-

թյան բնույթի և սահմանման հիմնահարցի այսպիսի հանգրվանը նաև կարևոր է քննարկվող իմացաբանական վեճի համատեքստում ճշմարտության օբյեկտիվության հիմնախնդրի հասկացման ու մեկնաբանման համար: Հիմնախնդրի առնչությամբ ուշագրավ է Ալեքսանդր Մանասյանի հետևյալ այլաբանությունը. *«Իմացության գնացքը օբյեկտիվ ճշմարտության կայարան հասնելու համար պետք է անցնի ճշմարտության կայարանով»* [3, 6]: Փիլիսոփայական իմացաբանության գրեթե ողջ պատմության ընթացքում ճշմարտությունը ընկալվել է որպես օբյեկտիվ և ինտուիտիվորեն կամ միևնույն հանգամանքների ու պայմանների առկայության պարագայում անհրաժեշտաբար հասանելի ճանաչողական վերջնարդյունք: **Եթե ճշմարտությունը համատեղելի է սխալների հետ, և հնարավոր չէ երբեք երաշխավորել տրված պայմանական ճշմարտության անսխալականությունը, ապա ինչպե՞ս կարող է այն լինել օբյեկտիվ:** Օբյեկտիվությունը մշտապես ենթադրել է **սուբյեկտիվի հաղթահարում** ճանաչողության գործընթացում: Միևնույն ժամանակ օբյեկտիվությունը ոչ միայն դիտարկվել է որպես ճշմարիտ **ճանաչողության վերջնարդյունք**, այլ նաև վերջինիս **ապահովման համար անհրաժեշտ և անօտարելի պայման**: Հետևաբար արդյո՞ք սխալվելու մշտապես առկա հնարավորությունը խոչընդոտ չէ օբյեկտիվ ճանաչողությանը և օբյեկտիվ ճշմարտությանը հասնելու համար: Եթե սուբյեկտիվի հաղթահարումը անհրաժեշտ պայման է օբյեկտիվ ճանաչողության և օբյեկտիվ ճշմարտության համար, հետևաբար հնարավոր օբյեկտիվ ճշմարտությունը պետք է ունենա միևնույն իմացաբանական արժեքը վերջինիս հետ հարաբերվող ցանկացած ճանաչողի համար ցանկացած տեղում և ժամանակում: Միևնույն ժամանակ սուբյեկտի առկայությունը ճանաչողությունը ինքնին ենթադրում է սխալվելու հնարավորությունը, քանի որ ճանաչող սուբյեկտը նույնիսկ լավագույն դեպքում հակված է այն բոլոր խնդիրներին, որոնք կարող են ի հայտ գալ ճանաչողության ընթացքում (զգայությունների խնդիրը, ինդուկցիայի խնդիրը, դիտարկման տեսական ծանրաբեռնվածության խնդիրը): Արդյո՞ք տրված հանգամանքները հաշվի առնելով հնարավոր է սխալներից լիարժեքորեն ապահովագրված օբյեկտիվ ճշմարտության գոյությունը: Ռիչարդ Ռոբտին, քննարկելով ճշմարտության և գիտելիքի օբյեկտիվության հիմնախնդիրները, եզրակացնում է, որ *«ճշմարտությունն ամբողջությամբ կախված է համերաշխությունից»* նկատի ունենալով, որ գիտության զարգացման տվյալ որոշակի փուլում այս կամ այն ճշմարտությունների շուրջ մասնագիտական համայնքը կարող է հասնել փոխըմբռնման և համաձայնության առկա հիմնավորումների ու փաստարկների տվյալ պահի գնահատման ու համադրման արդյունքում [13, 32]: Համանման մոտեցում ունեւ նաև Չարլզ Պիրսը, ինչպես նաև 20-րդ դարի փիլիսոփայության մի շարք այլ ներկայացուցիչներ ևս, որոնք ֆալսիֆիզմի օգտին հետզհետե ձևակերպվող նոր փաստարկների արվելացմանը գուզնթաց **ավելի էին հեռանում օբյեկտիվ ճանաչողության և օբյեկտիվ ճշմարտության հնարավորության գաղափարներից**: Այս առնչությամբ Ռոբտին գրում է *«Կարծում եմ, մենք չենք կարող պատկերացնել մի պահ, երբ մարդկությունը կարող է ասել. «Հիմա, երբ մենք վերջապես հասել ենք ճշմարտությանը, կարող ենք հանգստանալ»* [13, 39]: **Եթե ֆալսիֆիզմը ճիշտ է, ապա առաջանում է ճշմարտության բնույթի, ճշմարտության սահմանման և ճշմարիտ իմացության դասական ըմբռնումների և գաղափաների վերաիմաստավորման անհրաժեշտություն**: Ստացվում է, որ ճշմարտություն կամ ճշմարիտ իմացություն ասելով պետք է պատկերացնել սկզբունքորեն սխալական, փոփոխման և վերանայման ենթակա համոզմունքներ ու գիտելիքներ, որոնք երբեք չեն կարող հիմնավորվել բացարձակ ճշգրտությամբ և անկասկածելիորեն: Հետևաբար արդյո՞ք ճշմարտության գաղափարը և օբյեկտիվ ճշմարտության կատարելատիպը դուրս են մնում ճանաչողության և, մասնավորապես, գիտական ճանաչողության գործընթացներից: Կարո՞ղ է ճշմարտությունը լինել ճանաչողության ընդհանրապես և, մասնավորապես, գիտական ճանաչողության և հետազոտության նպատակը:

Ժամանակակից գիտության փիլիսոփայության մի շարք մտածողների կարծիքով, ճշմարտությունը չի կարող հետազոտության և գիտական ճանաչողության համար լինել նպատակ: Այսպիսի մտացման ձևավորման համար կան տարբեր պատճառներ, որոնք շատ մտածողների հետ են պահում ճշմարտությունը գիտական ճանաչողության և հետազոտական գործընթացում արժևորելուց և նպատակադրելուց: Քրիստոֆեր Հուքվելը, խոսելով խնդրի մասին, գրում է. **«Մենք փնտրում ենք մեր հարցերի համար այնպիսի պատասխաններ, որոնք համապատասխան են, պարզաբանող են և օգտակար են: Ուստի ճշմարտությունը լավագույն դեպքում կարող է լինել հնարավոր ստանդարտներից մեկը, որը մենք օգտագործում ենք հետազոտությունը գնահատելու համար»** [7, 2]: Պիրսը, ով համարվում է պրագմատիզմի հիմնադիրներից մեկը, հաշվի առնելով բացարձակ ճշմարտության և անսխալական ճանաչողության հնարավորության բարդությունները, ճշմարտության, գիտական ճանաչողության և հետազոտության հիմքում ընդունում էր օգտակարության գաղափարը՝ որպես ճանաչողության և դրա նպատակի հիմնական ուղեկիշ և արժեք: **«Հաճախ հետազոտողը պահանջում է խնդրի լավ լուծում, հետազոտական արդյունավետ գործիքակազմ և այլ առավել շոշափելի չափանիշներ: ... Հետազոտության արդյունքները մենք կարող ենք անվանել «ճշմարիտ» ոչ թե նրա համար, որ դրանք ինքնին ճշմարիտ են, այլ որովհետև դրանք պետք է ընդունվեն առաջադրված խնդրի հասկացման կամ լուծման համար»** [7, 3]: Ճշմարտության՝ որպես գիտական ճանաչողության և հետազոտության նպատակի դեմ հանդես եկող մտածողներից հատկանշական են Ռիչարդ Ռորտին և Դոնալդ Դեյվիդսոնը, որոնց մտացումը քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ անմիջականորեն կապված է ֆալսիֆիկացի հետ: Ինչպես Հուքվելն է ներկայացնում, Ռորտին և Դեյվիդսոնը պնդում են, որ **եթե ճշմարտությունը օբյեկտիվ է, իսկ ֆալսիֆիզմը՝ ճշմարիտ, ապա ճշմարտությունը չի կարող լինել հետազոտության մեր նպատակը** [7, 4]: Փիլիսոփաները, այս կերպ մտածելով, նախևառաջ առաջնորդվում են այն փաստարկով, որ **«անկախ այն բանից, թե որքան ուշադիր ենք մենք ուսումնասիրելիս և հետազոտելիս, մենք կարող ենք սխալվել: Ճշմարտությունը չի կարող լինել մեր նպատակը, եթե մենք երբեք հետազոտելիս երաշխիք չունենանք չսխալվելու վերաբերյալ»** [7, 4]: Դեյվիդսոնը ճշմարտության հիմնախնդրի վերաբերյալ իր հիմնարար աշխատանքում գրում է. **«Մենք շատ բան գիտենք և ավելին ենք սովորում: Այն, ինչ մենք երբեք հաստատակամորեն չենք կարող իմանալ, այն է, թե մեր համոզմունքներից որոնք են ճշմարիտ: Քանի որ ճշմարտությունը ոչ տեսանելի նպատակ է և ոչ էլ ճանաչելի է, երբ ձեռք է բերվում, չկա իմաստ ճշմարտությունը դիտարկելու որպես նպատակ»** [6, 7]: Փոփերը նույնպես ճշմարտության՝ որպես ճանաչողության, գիտական հետազոտության նպատակի մասին խոսելիս հանդես էր գալիս ֆալսիֆիկացի դիրքերից՝ նշելով, որ **գիտական մեթոդը չի կարող ապահովել գիտական արդյունքների ճշմարտացիությունը, քանի որ դրանք հնարավոր չէ վերջնականորեն ապացուցել:** Սակայն Փոփերը չի հրաժարվում ճշմարտության կատարելատիպից՝ նշելով, որ **«մենք մեր տեսությունները ստուգում և հերքում ենք՝ առաջնորդվելով ճշմարիտի գաղափարով: Ճշմարտությունն այս պարագայում ունի կարգավորող գործառույթ: Մենք տեսությունը փորձաքննության ենք ենթարկում ճշմարտության նկատմամբ՝ վեր հանելով և ամրագրելով դրանում առկա սխալները»** [4, 38]: Իհարկե, ճշմարիտ դատողությունների ամրագրումը և հավաքագրումը կարևոր է, սակայն **ճշմարտությունը միակ բանը չէ, որը մեզ հետաքրքրում է տեսություններում և գիտական հետազոտության ընթացքում: Բացի ճշմարիտ լինելուց՝ անհրաժեշտ է նաև, որ մեր տեսությունները, հետազոտության արդյունքները, վարկածները և իմացության այլ ձևերը լինեն մեծ և հետաքրքիր խնդիրներ լուծող:** Փոփերն արդարացիորեն նկատում է, որ կրկնաբանությունները և տրիվյալ ճշմարտությունները նույնպես ճշմա-

րիտ են, սակայն **«դրանք մեզ չպետք է հետաքրքրեն, քանի որ այսպիսի ճշմարտությունները ինտելեկտուալ առումով արժեքավոր չեն»** [4, 61]:

Վերը քննարկվածից պարզ է դառնում, որ ֆալսիֆիլիզմի և ինֆալիֆիլիզմի հայեցակարգային վեճն ունի առեղծվածի նշանակություն և ազդեցություն իմացաբանական-գիտականական մի շարք հիմնարար հիմնախնդիրների հասկացման, իմաստավորման և դրանց հնարավոր հանգուցալուծումների տեսանկյունից: Մի կողմից ակնհայտ է, որ ճշմարտության, գիտելիքի, օբյեկտիվ ճանաչողության հնարավորության, գիտելիքների հիմնավորման հիմնախնդիրներում ինֆալիֆիլիզմը բխվում է լրջագույն խնդիրների չկարողանալով լուծել անգամ ամենապարզ և առօրեական համոզմունքների և դրանց հիմնավորման համար անհրաժեշտ անսխալական և անկասկածելի իմացաբանական հիմքերի խնդիրը: Մյուս կողմից համանման խնդիրների առաջ է կանգնում նաև ֆալսիֆիլիզմը, որի առնչությամբ դեռևս պետք է հասկանալ, թե ինչպես է հնարավոր լիարժեքորեն խուսափել սկեպտիցիզմից և ինչպես է հնարավոր ֆալսիֆիլիստական գիտելիքը, հիմնավորման ինչպիսի մակարդակ է պահանջում այդպիսի գիտելիքը, և ինչպես են հնարավոր գիտելիքն ու ճշմարիտ իմացությունը, եթե երբեք հնարավոր չէ որևէ համոզմունք լիարժեքորեն հիմնավորել ու երաշխավորել սխալներից: Այս և այլ հարցերի ու խնդիրների քննությունը խիստ կարևոր և այժմեական է ֆալսիֆիլիզմի և ինֆալիֆիլիզմի իմացաբանական վեճի էության հասկացման ու վեճի համատեքստում փիլիսոփայական իմացաբանության և գիտության փիլիսոփայության մի շարք այլ հիմնախնդիրների լուծման տեսանկյունից:

Եզրակացություն

Հիմք ընդունելով կատարված վերլուծությունը՝ եզրակացնում ենք, որ

1. Ֆալսիֆիլիզմի և ինֆալիֆիլիզմի հայեցակարգային վեճը իմացաբանական-գիտաբանական առումով առավել արժեքավոր է գիտելիքի բնույթի և գիտելիքի հիմնավորման հիմնախնդիրների առնչությամբ, քանի որ, ի տարբերություն գիտելիքների, համոզմունքների առնչությամբ ֆալսիֆիլիզմի և ինֆալիֆիլիզմի մոտեցումները չեն հակադրվում և նույնիսկ կարող են միավորվել:

2. Ֆալսիֆիլիզմի և ինֆալիֆիլիզմի հայեցակարգային վեճը ոչ միայն անմիջականորեն կապված է ճշմարտությունների գնահատման հարցում որոշակի չափանիշների կիրառման խնդրի, այլ նաև ճշմարտության բնույթի և սահմանման հիմնախնդիրների հետ, քանի որ ֆալսիֆիլիզմի ճշմարիտ լինելն ընդունելու դեպքում պետք է ընդունել ճշմարտության մի շարք դասական ըմբռնումների սխալական բնույթը, իսկ այդ պարագայում ճշմարտության բնույթի, էության և սահմանման հիմնախնդիրները կանգնում են արմատապես վերանայման անհրաժեշտության խնդրի առաջ:

3. Եթե ֆալսիֆիլիզմը ճշմարիտ է, ապա հնարավոր չէ երբևէ երաշխիք ունենալ ձևավորվելիք համոզմունքի և գիտելիքի ճշմարիտ լինելու մեջ անսխալականորեն: Այստեղից էլ հետևում է, որ գոյություն չունեն ճշմարտության և գիտելիքների գնահատման անփոփոխ, անսխալական սկզբունքներ և մեթոդներ: Սա էլ իր հերթին նշանակում է, որ ֆալսիֆիլիզմի և ինֆալիֆիլիզմի հայեցակարգային վեճը պետք է նաև դիտարկել գիտելիքի աճի, գիտական առաջընթացի և գիտության զարգացման հիմնախնդիրների համատեքստում:

4. Ֆալսիֆիլիզմի և ինֆալիֆիլիզմի հայեցակարգային վեճն ունի անկյունաքարային նշանակություն գիտելիքի և, մասնավորապես, գիտական գիտելիքի օբյեկտիվության, ճշմարտության՝ որպես ճանաչողության և գիտական հետազոտության նպատակի հիմնախնդիրների հասկացման և հնարավոր լուծումների ձևակերպման համար: Եթե ֆալսիֆիլիզմը ճշմարիտ է, ապա օբյեկտիվ ճշմարտության հնարավորությունը դառնում է խիստ վտանգված, ինչը կարող է հիմք դառնալ ճշմարտության՝ որպես ճանաչողության և գիտական

հետազոտության նպատակի վերանայման անհրաժեշտության և ճշմարտության նշանակության ու դերի վերաբերման համար:

5. Ֆալսիֆիզմի և ինֆալսիֆիզմի իմացաբանական վեճի հասկացումն ու հնարավոր հանգուցալուծումը, ինչպես նաև դրա շրջանակում մի շարք իմացաբանական-գիտաբանական հիմնախնդիրների վերաիմաստավորման փորձերը կարող են ունենալ ուղենիշային նշանակություն փիլիսոփայական իմացաբանության և գիտության փիլիսոփայության հետագա զարգացման համար՝ ի դեմս գիտելիքի աճի, գիտական առաջընթացի և գիտության զարգացման հիմնախնդիրների հնարավոր հանգուցալուծումների:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-249>

Գրականություն

1. Անհաղթ Դ., Սահմանք Իմաստասիրության, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980, 159 էջ:
2. Кун Т. С. Структура научных революций, издательство «АСТ», Москва, 2003, 605 с.
3. Манасян А. С. Методологические принципы объективности научного знания и единство науки, издательство “Гитутюн” НАН РА, Ереван, 2002, 320 с.
4. Поппер К. Объективное знание: Эволюционный подход, 4-е изд., ЛЕНАНД, Москва, 2022, 384 с.
5. Barseghyan H. The Laws of Scientific Change, University of Toronto, Springer, 2015, p. 291.
6. Davidson D. Truth, Language and History: Philosophical Essays, Clarendon Press, 1st edition, 2005, p. 370.
7. Hookway C. Fallibilism and the Aim of Inquiry // Proceedings of the Aristotelian Society, Supplementary Volumes, Vol. 81, Oxford University Press, Oxford, 2007, pp. 1-22.
8. Kraft T. Scepticism, Infallibilism, Fallibilism // Discipline Filosofiche, 22 (2), 2012, pp. 49-70.
9. Leite A. Fallibilism // A Companion to Epistemology, Oxford: Blackwell, 2010, pp. 370-375.
10. Peirce C. Philosophical Writings of Peirce, Dover Publications, New York, 1955, p. 356.
11. Reed B. Fallibilism // Philosophy Compass, 7(9), 2012, pp. 585-596.
12. Ring M. Infallibility, Knowledge, and the Epistemological Tradition // International Philosophical Quarterly, 23 (4), 1983. pp. 367-381.
13. Rorty R. Objectivity, Relativism and Truth: Philosophical Papers, Cambridge University Press, 1990, p. 239.
14. <https://iep.utm.edu/fallibil/> (հասանելի էր՝ 11. 10. 2023 թ.):
15. <http://hakobsandbox.openetext.utoronto.ca/part/chapter-2/> (հասանելի էր՝ 05.10.2023 թ.):
16. <http://hakobsandbox.openetext.utoronto.ca/part/chapter-3/> (հասանելի էր՝ 05.10.2023 թ.):

Сущность и эпистемологическое значение концептуального спора фалибилизма и инфалибилизма

Давид Акелян

Резюме

Ключевые слова: *проблема истины, проблема знания и обоснования, проблема объективности, проблема цели познания, истина, эпистемологические основы, убеждение*

На протяжении сотен лет почти все представители философской эпистемологии считали, что человеческое знание должно основываться на неопровержимых, непогрешимых и абсолютных основах. Совершенством таких эпистемологических основ была мечта многих философов и эпистемологов — найти такие устойчивые эпистемологические вехи, которые станут эпистемологической основой для формирования непогрешимого знания, познания и создания более фундаментальных концепций знания и, в качестве конечной цели, познания и истинного знания. С точки зрения представленной проблемы весьма ценным является эпистемологический спор фалибилизма и инфалибилизма, где разрешение спора в пользу каждой из противоположных концепций может привести к необходимости переосмысления таких проблем, как природа и обоснование знания, объективность научного знания, возможность познания, природа истины и критерии истины, истина как цель познания и научного исследования, проблемы научного прогресса и роста знаний, имеющие фундаментальное и ориентирующее значение для дальнейшего развития философской эпистемологии и философии науки. Несмотря на то, что предпринимались различные попытки изучения эпистемологического спора противоположных понятий, особенно с 19-го века, а каждая из концепций по отдельности являлась предметом многочисленных исследований на протяжении всей истории философии, тем не менее, сегодня до сих пор нет единого понимания сути эпистемологического спора фалибилизма и инфалибилизма, основного круга проблем и вопросов последнего, а также эпистемологического значения концептуального спора. Изучение и анализ сущности эпистемологического спора, уточнение его эпистемологического значения, а также выделение в контексте спора и вытекающих из него рамок эпистемологически-научных проблем считаются центральными задачами данной работы. С этой целью в работе были поставлены следующие задачи и вопросы:

1. В чем суть и эпистемологическое значение спора фалибилизма и инфалибилизма?
2. Какой круг проблем предполагает эпистемологический спор?
3. Какое значение имеет эпистемологический спор фалибилизма и инфалибилизма с точки зрения понимания, переосмысления и решения проблем философской эпистемологии и философии науки?

**The Essence and Epistemological Significance of the Conceptual Dispute
between Fallibilism and Infallibilism**

David Akelyan

Summary

Key words: *the problem of truth, the problem of knowledge and justification, the problem of objectivity, the problem of the purpose of cognition, truth, epistemological foundations, belief*

For hundreds of years, almost all representatives of philosophical epistemology have assumed that human knowledge should be based on irrefutable, infallible and absolute foundation. Finding such stable epistemological milestones that will serve as the epistemological basis for the formation of infallible knowledge, cognition, and the creation of more fundamental concepts of knowledge—and, as the ultimate goal, cognition and true knowledge—was the dream of many philosophers and epistemologists. The epistemological dispute of fallibilism and infallibilism is highly valuable when viewed through the lens of the presented problem. A decision in favour of either side may lead one to reconsider issues such as the nature and justification of knowledge, the objectivity of scientific knowledge, the possibility of cognition, the nature of truth and its criteria, truth as the end goal of scientific research and cognition, and the issues surrounding the growth and progress of science. These issues are fundamental and guiding issues for the future development of philosophical epistemology and philosophy of science. Despite the fact that various attempts have been made to study the epistemological dispute of opposing concepts, especially since the 19th century, and each of the concepts separately has been the subject of numerous studies throughout the history of philosophy, nevertheless, today there is still no unified understanding of the essence of the epistemological dispute of fallibilism and infallibilism, the main range of problems and questions of the latter, as well as the epistemological meaning of the conceptual dispute. The study and analysis of the essence of an epistemological dispute, the clarification of its epistemological meaning, as well as the identification in the context of the dispute and the framework of epistemological and scientific problems arising from it are considered the central points of this work. To this end, the following tasks and questions were set in the article:

1. What is the essence and epistemological significance of the dispute between fallibilism and infallibilism?
2. What range of problems does an epistemological dispute suggest?
3. What is the significance of the epistemological dispute between fallibilism and infallibilism from the perspective of understanding, rethinking and solving the problems of philosophical epistemology and philosophy of science?

**Ներկայացվել է 12.10.2023 թ.
Գրախոսվել է 25.10.2023 թ.
Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.**